

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 6-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ ճեմարանի 1982—1983 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությանը հրավիրվել էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղական Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսության նախագահության սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ էին գրավել Տ. Սիոն, Տ. Հուսիկ և Տ. Ներսես սրբազանները:

Հանդեսը սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով, որից հետո ներկաները հոտընկայս լսում են Հայաստանի պետական հիմնը: Ապա հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է ճեմարանի քայլերգը: Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը հանդես է գալիս բացման հետևյալ խոսքով.

«Մեկ-երկու ժամ հետո պատմության գիրկն է անցնելու Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1982—1983 ուսումնական տարին:

Խոսելով անցնող ուսումնական տարեշրջանի մասին՝ նախ և առաջ ցավով պիտի արձանագրենք հոգևոր ճեմարանի բազմամյա դասախոս, վաստակավոր ուսուցիչ, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանի մահը:

Ինչպես հայտնի է բոլորիս, հոգևոր ճեմարանի շենքը, կառուցված լինելով իբրև մատենադարանի շենք, չուներ ուսումնական հաստատության համար անհրաժեշտ հարմարություններ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ անցյալ ուսումնական տարվա ընթացքում շինարարական աշխատանքներ սկսվեցին շենքի հյուսիս-արևմտյան հատվածում՝ մասնակիորեն բարելավելու համար ճեմարանի ուսումնական պայմանները: Եվ մենք հույս ունենք, որ մինչև 1983—1984 ուսումնական տարվա սկիզբը կավարտվեն սկսված աշխատանքները:

Հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի աշխատանքի բնույթը այնպիսին է, որ դժվար է մեկ-երկու տարվա ընթացքում նկատել կատարված աշխատանքի արդյունքները և ճիշտ գնահատական տալ մեր համատեղ գործունեությանը: Այնուամենայնիվ, ուրախությամբ պետք է նշել, որ արդեն այս ուսումնական տարվա ավարտին կգալի առաջընթաց կա կրթական հողի վրա: Այս տարի արձանագրվեցին ուսման առաջադիմության բարձր միջիններ: Լուրջ աշ-

խատանքներ տարվեցին ուսանողների եկեղեցասիրության և հոգևոր-բարոյական կողմը ամրապնդելու համար:

Վեհափառ Տեր, ահա այս մի քանի խոսքերով թույլ տվեք 1982—1983 ուսումնական տարվա ամավերջի հանդեսը հայտարարել բացված»:

Տեսուչ տեր հոր բացման խոսքից հետո հոգևոր ճեմարանի սաները, ղեկավարությամբ ազգային և եվրոպական երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, կատարում են «Որք վարդարեցին» շարականը: Այնուհետև ճեմարանի Գ դասարանի սան Գևորգ Գյուլգյուլյանը արտասանում է Վահան Թեքեյանի «Հաշվեհարդար» բանաստեղծությունը: Բեթհովենի «Լուսնի սոնատ» դաշնամուրային ստեղծագործությունը կատարում է ճեմարանի Գ դասարանի սան Հովակիմ Քիլեճյանը:

Ապա ուսանողության անունից շնորհակալական հետևյալ խոսքով հանդես է գալիս Բ լսարանի ուսանող Հակոբ Մարտիրոսյանը.

«Հավաքվել ենք նորից սրբական այս հաստատության կամարների տակ, ուր հոգևոր մշակների ձեռքով կոփվել ու կերտվել են բազում երիտասարդ հոգիներ: Մենք ձգտում ենք միշտ բարձր պահել այն սրբական հաստատության պատիվը, որ հիմնեցին մեր նախահայրերը: Լուսավորչի իմաստափայլ կանթեղի շուրջ հավաքված աշակերտներս ուրախ ենք, նաև հպարտ, որ մեզ բախտ է վիճակվել դառնալու սաները հոգևոր ճեմարանի: Մեր հոգիները ծարավ են հոգևոր ջրի: Ճեմարանը այն աղբյուրն է, որտեղից մենք կարող ենք հագեցնել մեր ծարավը:

Այսօր ինձ հնարավորություն է տրված իմ և ուսանող եղբայրներիս անունից շնորհակալական ջերմ խոսքեր ասել Ձեզ, Վեհափառ Տեր, տեսչությանը, դասախոսական կազմին և միաբանությանը:

Հոգևոր ճեմարանը մեզ բոլորիս համար բացեց ճանապարհներ՝ ճանաչելու ճշմարտությունը, արդարությունը, բարին ու գեղեցիկը և ամենակարևորը՝ մեզ հաղորդակից դարձրեց Փրկչի կենսապարգև պատգամներին, որոնք մեր կյանքի ամեն մեկ պահին լավագույն ուղեցույց են մեզ համար:

Հոգևոր ճեմարանում մեզ սովորեցնում են ապրել ոչ միայն հոգևոր կյանքով, այլև մեր հոգիներում սերմանում են հայրենասիրության սերմեր: Այդ տեսակետից հոգևոր ճեմարանը նաև ազգային-հայրենասիրական դաստիարակության լավագույն օջախ է:

Մենք երջանիկ սերունդ ենք: Ապրում ենք մեր հայրենիքում խաղաղ, ապահով պայմաններում; միշտ Վեհափառ Հայրապետի ուշադրության, տեսչության և դասախոսների հոգատարության ներքո: Մեզ մնում է միայն սովորել, սովորել ու սովորել: Ավետարանն ասում է. «Ում շատ է տրված, նրանից էլ շատ կպահանջվի»: Հետևաբար մեզ մնում է միայն քրտնաջան աշխատել, որպեսզի ի դերև չհանենք այն սպասումներն ու հույսերը, որ մեր մեծերն ունեն մեր նկատմամբ:

Մեր կողմից լինում են երբեմն սայթաքումներ: Ահա այստեղ, իրենց հորդորներով ու խորհուրդներով, մեզ օգնում են տեսչությունը, դասախոսներն ու միաբանները:

Այս առթիվ մեր շնորհակալությունն ենք ուզում հայտնել Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանին և ավագ լուսարար Տ. Մամբրե վրդ. Մարգարյանին, որոնց մշտական ցուցումների, խորհուրդների շնորհիվ հետզհետե հմտանում ենք եկեղեցական արարողությունների կատարման մեջ:

Այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք իմ և ուսանող եղբայրներիս կողմից համբուրել Ձեր պատվական սուրբ Աջը և ստանալ Ձեր հայրական օրհնությունները»:

Նորից ելույթ են ունենում հոգևոր ճեմարանի ուսանողները: Նրանք խմբովին և մեծ ոգևորությամբ կատարում են Էդգար Հովհաննիսյանի «Սարդարապատ» ստեղծագործությունը: Այնուհետև Գ դասարանի սան Գևորգ Մկրտչյանը արտասանում է Հովհաննես Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծությունը:

Հոգևոր ճեմարանի դաշնամուրի ուսուցիչ Թադևոս Ասմարյանի և Բ լսարանի ուսանող Սարգիս Կուտուպյանի համատեղ կատարմամբ լսվում է Ալեքսանդր Հարությունյանի և Առնո Բաբաջանյանի «Ռապսոդիա» դաշնամուրային ստեղծագործությունը:

Հոգևոր ճեմարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին տարեկան հաշվետու զեկուցումով հանդես է գալիս ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը.

«Աստուծո ողորմությամբ և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հավաքվել ենք այսօր կրթական այս սուրբ օջախում՝ ի մի բերելու 1982—83 ուսումնական տարեշրջանի ընթացքում մեր կատարած աշխատանքների արդյունքները:

Այս ուսումնական տարեշրջանում ճեմարանը հետևյալ պատկերն է ունեցել.

Տեսչական կազմ.

Տեսուչ՝ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյան.

Փոխտեսուչ՝ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյան

Քարտուղար՝ բարեշնորհ Գարուշ սրկ. Լալայան.

Վերակացուներ՝ բարեշնորհ Կառլեն սրկ. Պետրոսյան.
պարոն Վաչագան Հովհաննիսյան.
պարոն Լևոն Պետրոսյան:

Հունվարի վերջին տեսուչ Տ. Եվնիկ քհն. Պետրոսյանը մեկնեց Աթենք՝ պատրաստելու իր դոկտորական աշխատանքը: Վերակացուի պաշտոնին կոչվեց պարոն Լևոն Պետրոսյանը և տեսչությունը այս կապմով շարունակեց իր աշխատանքը մինչև ուսումնական տարվա ավարտը: Գոհունակությամբ պետք է նշել, որ տեսչությունը առանձին դժվարություններ չունեցավ ուսանողության հետ կարգապահության հարցում: Ընդհանուր առմամբ կարգապահությունը գտնվում էր պատճաշ բարձրության վրա:

Ուսուցչական կազմ.—Այս տարեշրջանը ինչպես Մայր Աթոռի, այնպես էլ հոգևոր ճեմարանի համար որոշ առումով դժվար տարի եղավ: Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և շրջապատված մեր ուսուցիչներով՝ մեծ ոգևորությամբ սկսեցինք այս տարեշրջանը, սակայն կարճ ժամանակ անց կորցրինք մեր բավմավաստակ ուսուցիչներից պարոն Արթուն Հատիտյանին:

Ուսուցչական կազմը հիմնականում մնացել է նույնը: Գրաբարի ուսուցիչ պրն. Երվանդ Մելքոնյանին փոխարինեց պրն. Պետրոս Բեդիրյանը: Հայր Զատիկ Ավետիքյանի փոխարեն բարեշնորհ Վարդգես սրկ. Մկըրտչյանը դասավանդեց «Վարք Սրբոց» առարկան, իսկ բարեշնորհ Գարուշ սրկ. Լապարյանը՝ «Քրիստոնեական վարդապետություն» և «Հայոց լեզու» առարկաները:

Ուսումնական.

Ընդգծելու համար մեր ունեցած դժվարությունները, նշենք, որ պրն. Արթուն Հատիտյանը իր վրա էր վերցրել կարևոր առարկաներ՝ Հայ Եկեղեցու պատմություն, Հայ Եկեղեցու մատենագրության պատմություն, աստվածաբանություն, Հայ Եկեղեցու իրավունք և հովվական աստվածաբանություն: Առաջին երկու առարկաների դասավանդումը հնարավոր եղավ ներքին ուժերով շարունակել, սակայն աստվածաբանությունը, որն այնքան կարևոր առարկա է, ընդհատվեց: Հույս ունենք, որ առաջիկա տարեշրջանի համար կկարողանանք վերոհիշյալ առարկաների գծով մասնագետ դասախոսներով ապահովել ճեմարանը:

Ուսուցչական կազմը կարողացավ պատվով կատարել իր վրա դրված պարտականությունը: Դրա լավագույն վկայությունն են ուսանողների ձեռք բերած բարձր գնահատականները: Տեսչությունը աշխատեց հետևել յուրաքանչյուր ուսանողի ուսման ընթացքին: Ամավերջի քննություններին, որոնք ամբողջ տարվա ընթացքում կատարված աշխատանքի ամփոփումն են ներկայացնում, ներկա գտնվեց փոխտեսուչը՝ անձամբ ստուգելու կատարված աշխատանքները:

Ուսանողություն.

Ուսումնական տարեշրջանի սկզբում ունեինք 42 ուսանողներ, իսկ այժմ ունենք 30. ոմանք մեկնեցին զինվորական ծառայության, ոմանք իրենց ցանկությամբ հեռացան, իսկ ուրիշներ հեռացվեցին վանական պատճառներով:

Ուսանողների բաշխումը ըստ դասարանների հետևյալ պատկերն ունի.

Բ լսարան՝ 8 ուսանող
Ա լսարան՝ 8 ուսանող
Գ դասարան՝ 6 ուսանող
Բ դասարան՝ 8 ուսանող:

Այս տարի ևս դասարանական բաժինը աստվոտյան և երեկոյան ժամերգությունները կանոնավոր կերպով շարունակեց Ս. Հովհաննես Մատռան մեջ: Այս առթիվ ցանկանում ենք մեր շնորհակալական խոսքն ուղղել գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանին՝ Մայր Աթոռի լուսարարապետին, իր ցուցաբերած հոգատարության համար:

Ճեմարանի ուսանողները ուսումնական տարվա ընթացքում տարբեր առիթներով ներկա եղան թատերական ներկայացումների, համերգների և այլ գեղարվեստական միջոցառումների: Կազմակերպվեցին դասախոսություններ ճեմարանի հարկի տակ բնագրական-աշխարհագրական թեմաների, պատմական Հայաստանի եկեղեցիների և հայ մատենագիրների մասին:

Ընթացիկ տարվա կարևոր երևույթներից պետք է համարել ճեմարասի մասնակցությունը Վարդանանց տոնախմբությանը, Ասորական Եկեղեցու Պատրիարքի այցելությունը հոգևոր ճեմարան, Ալեք և Մարի Մանուկյանների այցը, ինչպես նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկ. Ֆիլիպ Փոթերի այցն ու հանդիպումը ճեմարանի ուսանողության հետ: Չի կարելի չնշել նաև ճեմարանավարտ սարկավագների ավարտաճառերի պաշտպանությունը երկու փուլով ճեմարանի հարկի տակ:

Պետք է հիշել նույնպես ուսանողության աշնանային, ձմեռային, գարնանային և ամավերջի կազմակերպված շրջապտույտները, որոնց նպատակն է եղել մեր ուսանողներին մոտիկից ծանոթացնել մեր ժողովրդի փառավոր անցյալին, մեր ներկա նվաճումներին, սեր ու գուրգուրանք առաջացնել նրանց մեջ դեպի մեր ներկա հայրենիքը և վերջապես մեր այսօրվա հայրենի իրականության միջոցով հավատք ներշնչել նրանց դեպի մեր ա-

պագան, դեպի հայ ժողովրդի հավիտենականությունը:

Վեհափառ Տեր, «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»»:

Հաշվետու վեկուցումից հետո ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը ընթերցում է այն ուսանողների անունները, որոնք 1982—1983 ուսումնական տարում ճեմարանի տեսչության կողմից գերազանց ուսման, լավ վարքի և եկեղեցասիրության համար արժանացել են մրցանակների: Նրանք Վեհափառ Հայրապետի ձեռքից աջհամբույրով ստանում են սահմանված նվեր-մրցանակները:

Այնուհետև Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ տալու իր օրհնությունը հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնելով այն մասին, որ հոգևոր ճեմարանի ուսանողությունը ճեմարանի տեսչության և վերակացուների ղեկավարության ու հոգատարության ներքո այս ուսումնական տարում կանոնավոր կերպով մասնակցել է Մայր տաճարում եկեղեցական արարողություններին, շեշտում է կարևորությունը, տեսական ուսման զուգընթաց, եկեղեցական արարողությունների գործնական իմացության՝ նշելով, որ դա հոգևորականի առաջին պարտականությունն է և նրա գործունեության հիմքն է կազմում: Այս կապակցությամբ նա ուրախությամբ ավելացնում է, որ հոգևոր ճեմարանն ավարտած նախկին ուսանողներից շատերը, որոնք որպես հոգևորականներ ներկայումս պաշտոնավարում են Հայաստանում, իսկ նրանցից մի քանիսն էլ՝ արտասահմանյան հայ գաղթօջախներում, ամենուրեք գնահատանքի են արժանացել. ժողովուրդը գոհ է նրանց եկեղեցագիտական պատրաստությունից, ժամերգությունների կատարումից և առհասարակ նրանց վարք ու բարքից:

Վեհափառ Հայրապետը նշում է նաև, որ նոր է վերադարձել արտասահման կատարած իր ուղևորությունից և այդ առթիվ մի անգամ ևս հաստատել է, թե ինչքան մեծ կարիք կա հոգևոր սպասավորների գրեթե ամեն տեղ: Այս պարագան հատուկ ուշադրությանը հանձնելով հոգևոր ճեմարանի տեսչության ու դասախոսական կազմի և իր խոսքն ուղղելով ճեմարանի ուսանողությանը՝ նա ասում է. «Այս հանգամանքը պետք է պարտավորեցնի ձեզ, սիրելի ուսանողներ, որպեսզի դուք լրջությամբ մոտենաք ձեր կոչումին, ձեր ապագային և այդ գիտակցությամբ աշխատեք ճեմարանի հարկի տակ՝ ապագայում դառնալու համար պիտանի հոգևորականներ՝ զինված գիտությամբ, բարոյական նկարագրով, հայկական զգացմունքներով, եկեղեցագիտական տվյալներով և հայրենասիրական ոգով: Այս բոլորը մեկ ամբողջություն են կազմում մեզ համար և ներկայացնում են այսօրվա հայ երիտասարդ հոգևորականի ամբողջական, ներդաշնակ կերպարը: Ջանացեք հասնել այդ բարձունքին, անդուլ աշխատել, ուշադիր լինել ձեր անձերի նկատմամբ, որպեսզի ապագայում իրոք արժանավոր հոգևոր զինվորները դառնաք և՛ մեր Եկեղեցու, և՛ մեր ժողովուրդի»:

Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը Իր օրհնությունն է տալիս ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը, մաղթելով նրանց բարի հանգիստ արձակուրդի ընթացքում՝ սեպտեմբերին նոր ուժերով և նոր ներշնչանքով լծվելու համար իրենց աշխատանքին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Ամավերջի հանդիսությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ